

Դեկտեմբեր 28, 1976

Մեծայարգ
Տիար Յակոբ Ասատուրեան
Նիւ Եորք.

Յարգելի Տիար Ասատուրեան,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Դեկտեմբեր 8, 1976
թուակիր ձեր նամակը եւ ներփակեալ Առաջնորդարանիս 100
տուարի նուիրատուութիւնը, որուն համար կը յայտնէ իր
շնորհակալութիւնը՝

Այս առթիւ Նորին Սրբազնութիւնը կը փափաքի իր գնահա-
տանքը արձանագրել Առաջնորդարանիս հանդէպ ձեր ցոյց տուած
հետաքրքրութեան եւ բերած օժանդակութեան համար: Կ'աղօթենք
որ Տիրոջ օրհնութիւնները անպակաս ըլլան ձեր, ձեր ազնիւ
տիկնոջ եւ ձեր հարազատներուն վրայէն:

Համեցէք ներփակ զանել Առաջնորդարանիս համապատասխան
ստացականը:

Տօնական օրերու լաւագոյն քարեմաղթութիւններով,

Յարգանքով՝

Սիրան Բալվեցեան
Տնօրէն